ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 116-Դ

«19» 12 2022թ. ք. Երևան

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 46 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի անդամ Արմեն Վոլոդյայի Մարուխյանի՝ Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին հասցեագրված 19.12.2022թ. դիմումը, ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 2-րդ մասով, 7-րդ մասի 2-րդ կետով, ինչպես նաև «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի անդամ Արմեն Վոլոդյայի Մարուխյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնել:

2. Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի անդամ նշանակել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության պետ Վահե Ռաֆայելյանին՝ մինչև 2025 թվականի սեպտեմբերի 25-ը:

3. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2013 թվականի սեպտեմբերի 25-ի N 46 հրամանում.

«Արմեն Վոլոդյայի Մարուխյանին – Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, արդարադատության առաջին դասի խորհրդական՝ 4 տարի ժամկետով՝ մինչև 2025 թվականի սեպտեմբերի 25-ը»

պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Վահե Վարուժանի Ռաֆայելյանին – Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության պետ, արդարադատության առաջին դասի խորհրդական՝ մինչև 2025 թվականի սեպտեմբերի 25-ը»:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

5. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

6. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին և դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին և Արդարադատության ակադեմիա:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ